«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

,,Центр поддержки ребенка и семьи в Лори марз" ГНО

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր,
Տարոն-4, ՄՄՇ 23

РА, Лорийский регион, г. Ванадзор,
Тарон-4, микрорайон ММШ 23

հեռ. тел. (374-322) 6-07-51

E-mail: lori.childcarecenter@mlsa.am

279 26.01.2023թ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան
Հարգելի տիկին Արծրունյան

Հայտնում ենք Ձեզ, որ Ձեզ հետ 2022թ. նոյեմբերի 22-ին կնքված գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման ԼՄԵԸԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/1 և ԼՄԵԸԱԿ-ԳՀԱՊՁԲ-23 պայմանագրերի՝ Էնադ ՍՊԸ -10, 13, 17, 23 և Մարգարիտ Արծրունյան ԱՁ – 33 չափաբաժինների մասով պայմանագիր կնքվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 40-րդ կետի 6-րդ ենթակետը, ինչը նշված է նաև պայմանագրի հավելված 2-ում: Մեջբերում եմ. << ***6) եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Սույն պարբերության պահանջները չեն կիրառվում էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգի դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ հրավերի պահանջներին բավարար է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ***.>>

Սույնով ծանուցում ենք Ձեզ, որ <<Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն>> ՊՈԱԿ-ը միակողմանիորեն լուծում է Ձեզ հետ կնքված պայմանագրերը՝ վերոնշյալ չափաբաժինների մասով, քանի որ օրենքով սահմանված ժամկետում չեն տրամադրվել համապատասխան ֆինանսական միջոցներ:

Հարգանքներով՝
Տնօրենի պարտականությունները կատարող **Գ.Ապանյան**